Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն.
Վարդապետաց Ճիւղ.
№ 1.

ՎԻԱՍԱ

ՇԱԿՈՒՆՏԱԼԱ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

1914

ՎԻԱՍԱ

ՇԱԿՈՒՆՏԱԼԱ



Գ. Է. ՖՈՒԿՕԻ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԻՑ
ՓՈԽԱԴՐԵՑ

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴ. ՄԱՔՍՈՒԴԵԱՆՑ

ԷՋՄԻԱԾԻՆ
ԵԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ

1914

Ամէն իրաւունք վերապահուած է

թարգմանչին:

Սրտ. 390



ՆՈՒԷՐ

ԱԶՆԻՒ ԸՆԿԵՐԻՍ

ԱՐԺ. Տ. ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱՅ

ԹԱՒԱՐԲԷԳԵԱՆՑԻՆ

Մ Վ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՆԴԻԿ գրականութիւնն արտադրել է «Շակունտալա» անունով երկու գործ։ Առաջինը ներկայ պատմուածքն է. հեղինակն համարում է Վիասա վանականը, որին վերագրում է Հնդկաց աշխարհածանօթ դիւցազներգութեան՝ Մահաբհրատայի՝ ամբողջ ստեղծագործութիւնը։ 18 գրքից է բաղկացած այդ հսկայ գործը եւ պարունակում է 220000 տող։ Շակունտալայի պատմուածքը, հիմնուած մի ազգային աւանդութեան վրայ, կազմում է այդ 18 գրքերից մին, ըստ դասաւորութեան առաջինը։ Մահաբհրատայի խմբագրութեան ժամանակը ճիշտ յայտնի չէ. համարում է սակայն Ք.ից առաջ

Դ. դարից մինչեւ Ք.ից յետոյ Ա. դարի ժամանակամիջոցում՝ ի մի հաւաքուած։

Երկրորդ «Շակունտալա»ն մի դրամա է, հիւսուած առաջինի վրայ։ Հեղինակն է Կալիդասա նշանաւոր բանաստեղծը (Ք.ից յետոյ Ե—Զ դար)։ Սոյն երկու «Շակունտալա»ների միջեւ կան մի քանի տարբերութիւններ, որոնց վրայ աւելորդ ենք համարում առանձին կանգ առնել այստեղ։ Մեր թարգմանութեամբ երկուսն էլ արդէն հայացած են։ Մնում է դրամա «Շակունտալա»-յի հրատարակութիւնը, որ տեղի կ'ունենայ, հաւանօրէն, մօտ ապագայում։

Ներկայ պատմուածքի թարգմանութիւնն եղած է, ինչպէս յիշատակուած է վերնագրի տակ, Ֆրանսերէն ազատ թարգմանութիւնից։ Այնու ամենայնիւ, թարգմանութեան ընթացքում, իբրեւ հնդիկ գրականութեան փոքր ինչ ծանօթ, տեղ տեղ մի քանի մանր հատուածներ կարեւոր դատեցինք կրճատել, վստահ լինելով, որ մեր կրճատած մասերը Ֆրանսացի թարգմանչի, իբրեւ լուսաբանութիւն, աւելացրածներից են։

Մ. Վ.

ՎԻԱՍԱ.

ԾԱԿՈՒՆՏԱԼԱ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

ԻՆԴԻԱՅԻ դրախտում սարսափը պատել է բոլոր կրջանիկներին. տիրութեան ամպը տարածուած է ցնծութեան ու հեշտանքների օթևանի վրայ. Գանդհարվանները*) ընդհատել են իրանց երկնային նուագները և էլ չեն երգում Տիրոջ փառքը. յաւերժահարսերը, տխրած, նստել են գլխիկոր, չեն մտածում ոչ պարի ոչ սիրոյ մասին, և Ոգիների թիւաւոր երամը անշարժ, սարսափահար դիտում է մթագնած դէմքը նրա, որ շանթն է կրում իր ահարկու ձեռներում։ Սրբերն ու հերոսները, լուսամարմին, լռիկ շրջապատել են այն գահը, ուր Ինդրան է բազմած մի սպիտակ ամպհովանու տակ, վերջինս հաստատուած մի ականազարդ ձողի վրայ։ Ի զուր ամենագեղեցիկ ափսարանները**), Բամբհա, Դհրիտաքշի, Ուրվասի և Մենակա, շարժում են անուշաբոյր հովհարը զովացնելու բարկութիւնից վրդովուած այդ դէմքը։ Ի՞նչ հոգ, ի՞նչ մտածութիւն

*) Երկնային երաժիշտներ.

**) Ինդրայի դրախտի յաւերժահարսները.

կարող էր խոովել արդեօք մի աստուածային էակի մեծափառ զուարթութիւնը։

Յանկարծ կարծես երազից է զարթնում Ինդրան-կանչում է Մենակային, յաւերժահարսերի մէջ ամենից նշանաւորին. ամէնքն ուշադիր ականջ են դնում։ Աստուածն է խօսում.

«Լսիր,—ասում է,—Կաուսիկի գետի ափին կայ մի ճգնարան և այնտեղ ապրում է Վիսվամիտրա անուն մի ճգնաւոր, որ ժամանակով դաստիարակն ու խորհրդականն էր Ռամայի. այդ ճգնաւորն ինձ հանգիստ չի տալիս։ Ո՞վ կարող է երաշխաւորել, որ նա, էր խստամբեր ճգնութեանց շնորհիւ, չպիտի յաջողի զահընկէց անել ինձ և իմ տեղս բռնել։ Դու միայն, Մենակա, դու կարող ես փրկել ինձ մի այսպիսի վտանգից։ Դու որ քո գեղեցկութեամբ բոլոր ընկերուհիներիդ գերազանցում ես, իջիր երկիր, և այս ճգնաւորի առաքինութիւնները խարխլելու համար գործ դիր Բրահմայի քեզ տուած բոլոր զէնքերը,—գդուիչ ձայնդ, խոովող նայուածքդ, խորամանկ ժպիտդ, գրգռիչ շարժ ու ձևերդ. ոչինչ մի խնայիր, սիրելիս, դու պիտի յաղթես նրան—նա դեռ փորձութեան ենթարկուած չէ,— և ես վախի տեղ չպիտի ունենամ այլևս»։

Հասարակ մահկանացուների նման, յաւերժահարսերն ևս իրանց հրապոյրների մասին լաւ կարծիք ունին. և սակայն Մենական երկչոտութեամբ պատասխանում է.

«Ո՜հ, Տէր, ինչ դժուար յանձնարարութիւն ես վստահանում ինձ։ Ի՞նչպէս ենթարկեմ ինձ մի

այնպիսի Մունիի*), որից դու ինքդ ես զարհուրում մինչ այն աստիճան, որ անտեսանելի լինելու համար Սոման**) խմեցիր։ Կարծում ես ուրեմն, որ գեղեցկութիւնս իր ՁՆասակար ներգործութիւնը չպիտի անէ այդ անարատ և հզօր ճգնաւորի վրայ, որ իր լոգանքի համար մի ահագին գետ բխեցրեց. մի ճգնաւորի, որ երկիրը դղրդացրեց ոտքի մի հարուածով և որի ձեռը շատ հեշտութեամբ ջարդուփշուր էր անելու բարձրագագաթ Մերու Լեռը։ Հաւատացած եղիր, Տէր, որ իմ այդ յանդուգն քայլը շատ անողոք կերպով պիտի պատժուի և խեղճ յաւերժահարսս ոչնչացուելու եմ նրա բարկութեան կրակից»։

Այս խօսքերի վրայ Ինդրայի ճակատը մթագնում է և մատները, որոնք շանթն են հուպ տալիս, շարժւում են ջղաձգօրէն։ Մենական, ոտից գլուխ դողալով, յարում է.

«Հոգ չէ, Տէր, քանի որ հրամայում ես, իմ պարտքն է հնազանդել։ Միայն խնդրում եմ, ինձ չլքանես. երկնքի բարձրութիւնից պաշտպանիր ինձ երկրի վրայ. տուր ինձ ուղեկիցներ, որոնք, եթէ հարկ լինի, ինձ օգնեն ու պաշտպանեն։ Այնպէս արա, որ, երբ մօտենամ ճգնաւորին, մի մեղմ քամի փչէ շրջակայ պուրակներից. որ Վայուն***) աննկատելի կերպով բարձ-

*) Միայնակեացներ. որոնք անծնատուր լինելով ինքնամփոփման ու ապաշխարութեան՝ ձեռք էին բերում այդպիսով դերբնական ոյժ ոչ միայն հասարակ մահկանացուներին յաղթելու, այլ եւ աստուածներին։

**) Սոմա—նուիրագործուած հեղուկ։

***) Քամիների աստուած։

բացնէ պարեգօտիս ծալքերը, և Կաման*) միայնակեացի ականջին փսփսայ հրապուրիչ խօսքեր։ Յաղթելու համար ես պէտք ունիմ ամենից առաջ ճարտար ու եռանդուն աջակիցների»։

Այսքան ընական մի խնդրանք կարող էր մերժուել Ինդրայի կողմից։ Այս հզօր աստծու սարսափները թող ձեզ չզարմացնեն. նա մին է այն աստուածութիւններից, որոնք ենթակայ են հոգեփոխութեան և որոնց փառքը նսեմացնում են մահկանացուներիս առաքինութիւնները։ Միայն թէ նրա վստահութիւնը մեծ էր սիրային խնդիրներում իր փորձառութեամբ ծանօթ սոյն Ափսարայի տաղանդի վրայ, որով և Մենակայի խօսքերն իսկոյն հանդարտեցրին նրան։ Ուրախութիւնն ու ցնծութիւնը կրկին տիրեցին Սվարգայում**). պարերով ու երգերով տօնուեց չքնաղ յաւերժահարսի մօտալուտ յաղթանակը։

Մենական իր նախնական բոլոր պատրաստութիւնները տեսաւ մեկնելու համար։ Նախ ընդունեց մի լոգանք երկնային սպեղանիներով բուրումնաւէտ. ապա գլուխը զարդարեց դրախտի պարտէզներում փթթած ծաղիկների փունջերով ու հագաւ իր ամենափայլուն շրջազգեստը և, առանց այլևս ժամանակ կորցնելու, ճանապարհ ընկաւ Ինդրայի կառապան Մատալիի առաջնորդութեամբ։ Զարաճճի Կաման ու Վայուն, իրանց յանձնարարուած դերի վրայ ուրախ, խայտալով հետևում էին կառքին, որ ճեղքում էր ամպերն ու հա-

*) Սիրոյ աստուած.

**) Երկինք.

լածում մութը։ Ոչ լուսին ոչ արև չէին լուսաւորում միջոցը, որի համար հէնց այս գերերջանիկ մարմինների փայլն էլ բաւական էր։ Ամպամած եթերում անվերջ փոթորիկ էր. որոտը թնդում էր, շանթը բոցավառ զիգզագներ էր գծում և փայլակներն անընդհատ իրար էին յաջորդում։ Ահարկու թաթառներ, խստաշունչ ամպրոպներ, դժնդակ շաչիւններով, սուզւում էին անվերջ խաւարի գիրկը։ Ստորին կարգի աստուածութիւններից թեատրած վիթխարի Գարուդասները, հրաշունչ, հրաբերան Նագասները, կարմրաթիր չարագործ Բաքշասները*) խումբ խումբ հաւաքւում էին մեր ուղեւորների ճանապարհի վրայ։ Անցնողները թէև անմահներ, բայց իրանց շուրջը միտեսակ ահ ու սարսափ էին սփռում։ Բարեբախտաբար ուղեորութիւնը կարճ տեւեց և լուսնակն հաղիւ էր դուրս եկել, երբ երկնային կառքը հասաւ ճգնաբանի[1] մօտերը։

Ինդրան շատ լաւ էր ընտրել ժամը։ Ոչինչ աւելի նպաստաւոր չէր այն խաղի համար որ խաղացուելու էր մի ճգնաւորի և մի այդպիսի պերճաշուք յաւերժահարսի միջև քան դարնանային այդ իրիկունը, ուր ծառերից ծաղիկները թափւում էին որպէս հոտաւէտ անձրև, ուր օդը կատաղի հոսանքներից յագեցած՝ մեղկացնում էր ամենահուժկու կամքերն անգամ, և ուր ամէնքը, սկսած պուրակում թառած Կոկիլայից**) մինչև խոտի տակ բոյն դրած ծղրիթը՝ գարնան դարձն

**) Անդղեր, օձեր եւ դեւեր։

1) Հնդկական սոխակ։

էին երգում։ Միայն ճգնաւորն էր անտարբեր տիեզերական խնդութեան հանդէպ։ Նա, ինչպէս ամէն իրիկուն, նոր էր ենթարկել իրան ինքնաչարաչարման։ Ջերմեռանդ ապաշխարութեամբ մեղքը քաւելուց յետոյ սուրբը ծալապատիկ նստած էր քարայրի դրանը՝ խորասուզուած յափշտակութեան ու աղօթքի մէջ, երբ յանկարծ երևաց Մենական հարևան անտառից, և առանց այլևայլի սկսեց ուղղակի մին այն պարերից, որոնք այնքան գնահատուած են երկնաբնակների կողմից. վաւաշոտ թիթեռնիկի նման թռուլլում էր մարգագետնի երեսին, մերթ նուաղուն ու կրքոտ, մերթ այնպէս աշխոյժ ու թեթև, որ ապարանջաններն ու մանեակները էին երերում վզի ու թևերի վրայ՝ դայլայլող թռչունների նման մի շղուկ հանելով։ Զուր աշխատանք։ Միայնակեացի նայուածքը, յառած միայն մի կէտի վրայ, ոչինչ չէր տեսնում*)։ Ժամանակ էր որ հանդէս դայլն մեր երկու չարաճճիները. այդպէս էլ եղաւ։ Նախ քամին սկսաւ փչել անկատելի կերպով։ Ձեվիւռի մեղմ շունչը վեր էր բարձրացնում սպիտակ պարեգօտի ծալքերը՝ երևան հանելով երկու ողորկ սիւներ, որոնք, բանանի ընի նման, կրում էին այս չքնաղ մարմինը։

Կաման թեքւում է դէպի միայնակեացը։ «Տես— փսփսում է չարաճճի աստուածը,— այս անամօթը յաւակնութիւնն ունի քեզ հրապուրելու. դու կարող ես համարձակ նայել նրան. մի՞թէ քո առաքինութիւնն անդրդուելի չէ»։

*) Հնդիկ ճգնաւորները աղօթելիս միայն մի կէտի վրայ պարտաւոր են սեւեռել իրանց նայուածքը, որպէս զի միտքը ուրիշ բանով չզբաղուի։

Անապատականն այս նենդամիտ հաւատիացման վրայ՝ մի ակնարկ է ձգում դէպի այն կողմը։ Սխալուում է. այդօրինակ տեսարանները վտանգաւոր են թէկուզ ապաշխարանքից արիւնը սառած մի ճգնաւորի համար. ըստ երևութին զսպուած բնութիւնը աւելի հրամայողաբար է զարթնում։ Վիսվամիտրան կարող է չտեսնել Մենակայի, երիտասարդութեան բոլոր դանձերով զարդարուած այս յաւերժահարսի, գեղեցկութիւնը քամու դէմ մղած իր կուրի մէջ։ Դիրուկ պարանոցը, սեգ կուրծքը, հեշտաւէտ իրանները մերթ բարձրանում մերթ ուղղւում են գրգռիչ նազանքներով։ Խորամանկ յաւերժահարսը որպէս թէ ուզում է շորերը վրայ բերել, այն ինչ աւելի է քամուն տալիս, և նրա մէն մի շարժուածքը մի նոր փայլ է հանդէս բերում։

Ճգնաւորի աղօթքը կանգ առաւ. աչերն անթարթ հետևում են այս վերին աստիճանի գրաւիչ տեսարանին։ Քամին՝ մի վերջին շնչով՝ դէն է ձգում Մենակայի պարեգօտը և նրան թաչտել է տալիս մարգարէտնի վրայ։ Այս վերջին հարուածն էր անօրինակ այս կռուի մէջ, ուր երկու հակառակորդներն իրար լաւ էին գտել։ Յաւերժահարսն հանդէս է գալիս առանց քողի, իր չնաշխարհիկ գեղեցկութեան ամբողջ փայլով։ Որպէս թէ խիստ դժգոհ պատահած արկածից՝ ողջախոհ մարդու շփոթութեամբ՝ սկսում է թեթև շղարշի նուիից վազել, որ սակայն միշտ խոյս է տալիս նրանից ամէն անգամ, երբ նա ձեռը տանում է բռնելու։ Վերջացաւ. կամն ու վայրն կարող են իրար աջողութիւն շնորհաւորել. մի բոպէի փորձութիւնը բաւական էր ջնջելու մի ամբողջ ճգնաղգեաց կեանք։ Ափ-

սարան, ճիշտ է, իր շրջազգեստը բռնեց, բայց, աւաղ, շատ ուշ. սրբի առաքինութիւնն արդէն տեղի էր տուել։ Մի ուժգին շարժումով նա սեղմում է իր կրծքին անմահի փափուկ մարմինը. առնում է նրան իր բազուկների մէջ և դետեղում մամուռէ անկողնի վրայ, որ վկայ էր այնքան ինքնամոռացումների։ Այս անգամ այլևս տառապանքի հառաչներ չէր որ արձակում էր նա և որոնց արձագանգ էր տուել միշտ քարայրը։

Մենակայի ուղածն ուրիշ բան չէր բայց եթէ պատասխանել իր առաջ բերած անոյշ զրգիռներին։ Սէրն իր վրէժը լուծեց միայնակեացիկ. զգաստութեան յարկը դարձաւ ցնորքների օթևան և շաբաթները սահեցան մի օրից աւելի արագ։ Շատ չանցած՝ Մենական նկատեց, որ իր ծոցում կրում է ճգնաւորական դիւրաբեկութեան կենդանի ապացոյցը։—Ինդրայի կամքը կատարուած էր։

Երբ երկունքի ժամը մօտեցաւ, յաւերժահարսն անգթօրէն թողեց միայնակեացին իր խղճի խայթի հետ և ինքն առանձնացաւ. Մալինի գետի ափերը։ Այս այն գետն է, որ, ըստ աւանդութեան, ոռոգում է Հիմալայայի հովիտներից մէկը։ Այնտեղ կեանք տուաւ մի փոքրիկ չքնաղ աղջկան։ Դրանից յետոյ Մենական իրաւունք չունէր այլևս յապաղելու երկրի վրայ։ Մի անողոք օրէնք պարտաւորում է յաւերժահարսներին վերադառնալ երկինք, հէնց որ աշխարհ են բերում մահկանացուների հետ ունեցած իրանց սիրոյ պտուղը։ Յաւերժահարսն ուզում է հեռանալ, սակայն երախայի փոքրիկ մատները մնում են կառչած նրա զգեստներին, թոյլ չտալու համար որ մեկնի։ Փոքրիկը ժպտում է

և կարծես պաշտամունքիւն է խնդրում մօրից։ Ափսարայի աչքից մի շէթ արցունք կաթում է մանկան ճակտի վրայ։ Ո՞րպիսի անգթութիւն մեկնել հեռանալ՝ թողնելով աղջկանը միայնակ այդ անապատում, ձգուած գազանների յօշոտիչ ժանիքների առաջ։ Նա մի յուսահատական ակնարկ է ձգում դէպի երկինք. կարծես այդ բոպէին կամովին մոռանալիս լինէր իր անմահ լինելը և յիշէր միայն, որ մայր է։ Բայց անողոք աստուածների կամքն է, որ հեռանայ։ Մենանկան մեղմով հանում է շրջազգեստն ու, արցունքը աչքին, խոյս է տալիս՝ առանց համարձակելու նոյնիսկ գլուխը ետ շուռ տալ։ Արդեօք երկնային շնորհաւորութիւնները մոռացնելու են նրա կորուստը։ Այսքանը յայտնի է, որ Ինդրան՝ գթալով նորածին էակի վրայ, որ անմեղ անմեղ խայտում էր, ջրերի ափին, մի ծաղկեայ անկողնի վրայ, նրան առաւ իր հովանաւորութեան տակ։ Մօտենում են մի խումբ մսատենչ շակունտաներ*)։ Բայց, ի՞նչ հրաշք, ոչ միայն չեն վնասում նրան, այլ և պաշտպանում էլ են անտառի առիւծների դէմ։

Ժամանակ յետոյ, իր առաքինութիւններով հռչակուած մի ճգնաւոր, Կանվա անունով, գալիս է լողանալու Մալինի գետում և տեսնում է մի փոքրիկ էակ գետափին լքուած։ Դթոտ անապատականը առանց բոպէ կորցնելու գրկում է մանկան և տանում իր հետ

*) Շակունտա հնդկերէն նշանակում է առհասարակ մի որ եւ է մեծ թռչուն, ինչպէս. օրինակ. անգղ. իսկ Շակունտալա՝ այդպիսի թռչուններից հովանաւորուած.

320

վանք։ Հօր պէս խնամում, դաստիարակում է նրան և անուանում Շակունտալա ի յիշատակ այն թռչունների, որոնք մի ժամանակ պաշտպանում էին նրան։ Շակունտալան մեծանում է վանքում թարմ ու անարատ, հեռու արտաքին աշխարհից, նման մի տունկի՝ որ աճում է անտառների ստուերում։

Ա

ԺԱՄԱՆԱԿՈՎ Հնդկաստանում կար Պուրուի*) շառաւիղներից մէկը Դուշմանտա անունով, մեծազօր տէրը աշխարհի մի մասի։ Նրա պետութեան սահմաններն հասնում էին մինչև ովկիանոսի ափերը։ Նրա օրհնեալ գայիսոնի տակ ամէնքն երջանիկ էին։ Մարդիկ վայելում էին երջանկութիւնը պարտաճանաչութեամբ։ Բրահմաններն իրանց պաշտօնն էին կատարում խղճի մտօք և, սուտն ինչ բան է, չգիտէին։ Ինդրան ժամանակին հոսում էր անձրևն երկրի վրայ. պտուղներն համեղ էին և դաշտերը՝ արջառներով հարուստ։

Թագաւորն՝ իր թշնամիներին նուաճած՝ անձնատուր էր եղել որսի, այլևս ոչ թէ մարդկանց էր պատերազմ յայտարարում այլ անասուններին։ Քաջ մարմ-

*) Փլուխ մի արքայական տան. որ իր ծագումը Լուսնի Աստծուց էր համարում։

նամարդ էր, այն պէս ոչ ոք չէր կարող աւելի աջողութեամբ դործ ածել աղեղ, նիզակ կամ լախտ։

Մի օր մեծ շքով դուրս եկաւ Հաստինապուրա*) մայրաքաղաքից դէպի Հիմալայի սարահարթերը ծածկող անտառները որսի։ Նրան հետևում էին իր բոլոր պալատականներն, սկսած տան քրմից մինչև ծաղրածուն, իսկ երկու կողմից գնում էին եավանիներն**) ու բաղմաթիւ ձիաւորներ. թագաւորն առաջանում էր սիգապանծ փողերի ու թմբուկների որոտի միջով, բազմած մի պերճազարդ փղի վրայ։ Կանայք, տանիքներում կանգնած, դիտում էին անցքը. նա թւում էր նրանց աչքին կենդանի պատկերն այն Աստծու, որ իր ձեռին շանթն է կրում։ «Ո՞ւր մնացին,—աղաղակում էին դրանք,—թշնամիները, որոնք սրա անպարտելի բազկի ոյժն էին փորձում»։ Եւ բոլորն, հիացումից, ծաղիկներ էին շաղ տալիս հերոսի գլխին։ Քրմեր, մարտիկներ, վաճառականներ ու ծառաներ, բոլորն հետևում էին շքախմբին՝ ցնծութեան աղաղակներ արձակելով ու լիաբերան օրհնելով որսորդ արքային։

Վերջապէս բաղմութիւնը ցրուեց, երբ թագաւորն իր շքախմբի հետ մտաւ մի այնպիսի խիտ անտառ, ուր արևի ճառագայթներն անկարող էին թափանցել։ Այնտեղ դալարիքն անդամ մութ գոյն ունէր. հողը ծածկուած էր փուլ եկած ժայռերի բեկորներով. անկերպարան քառս, աւերակ բնակավայր, որից խոյս էր տուել մարդ արարածը և միայն գազաններն էին տի-

*) «Փղերի քաղաք», հին Դեհլի քաղաքը։

**) Օտարազգի ստրկուհիներ։

բացել նրան։ Խուլ մռունչներով այնտեղ օդը թնդացնում էին արջերը, առիւծները, ընձառիւծները ու շնագայլերը։

Դուշմանտան, իր խմբին քաջութեան օրինակ տալու համար, առաջ է նետւում տակն ու վրայ անելու երէչների որջերը։ Մէկ կողմից նետերով տապալում է երկչոտներին, որ հեռու են փախչում, միւս կողմից՝ նիզակահար է անում յանդգնոներին, որ համարձակում են մօտ գնալ։ Նրա հարուածներից ոչ չորքոտանիներն են զերծ մնում ոչ թռչունները։ Գազանները խումբ խումբ արիւնաշաղ փուում են խոնաւ մամուռի վրայ։ Ոմանք էլ փախուստ են տալիս խելացնոր, վիրաւորուած մահացու կերպով և շատ չանցած ընկնում են տանջանքից կամ յոգնութիւնից ուժասպառ։ Վայրի փղերը վազում են անտառի միջով կատաղի մռունչներ արձակելով։ Արծիւներն ու անդղերը, հէնց թռած միջոցին էին նետահար լինում և իրանք իրանց վրայ պտուտկելով թաւալգլոր ընկնում գետին։ Իրանց պետին նմանելու նախանձախնդիր՝ պալատականներն ամէն կողմից սլաքները կարկուտի նման էին տեղում։ Կարծես գարնան տեղատարափ անձրև լինէր։ Ամենից քարասիրտն անգամ չէր կարող չյուզուել այս կոտորածից։

Սակայն վերջապէս քաղցն ու ծարաւն սկսան նեղել որսորդներին։ Ծաղրածուն չէր ծածկում իր գըժգոհութիւնը։

«Հրաշալի՜ արհեստ,— ասում էր,— երբ մարդ ընկեր է դառնում մի որսամոլ թագաւորի։ Այս էլ կեանք է, գիշեր ցերեկ մեխուած մնա ձիու վրայ, վազիր ան-

տառի մէկ ծայրից միւսը՝ հայածելու համար մի եղնիկ կամ մի վարազ. ծարաւդ կարիր հեղեղի պղտոր ջրից, ծառերի տերևներով լիքը. ժամանակին հաց մի ուտի, ուտելիս էլ կիսախաշ միս կեր...: Ես հիւանդ վէր կ՚ընկնիմ, եթէ Օգոստափառ բարեկամս չխղճայ ինձ»:

Այս խօսքերից առնուազ չկայ: Իրանց վեհապետին զուարճացնելու պաշտօն ունեցող այս կարգի յիմարները պատժից ազատ են, և նրանք այնքան խելք ունին, որ գիտեն, թէ ինչպէս պիտի կատարեն իրանց պարտականութիւնները: Ամէն կողմից շտապում են գոհացում տալ Մադհավայի պահանջներին. երկու թզենու փայտ իրար շփելով կրակ են պատրաստում և միսը խորովում են թեժ կրակի վրայ: Խումբը շարւում է կրակի շուրջը՝ վերջ տալու ստամոքսի պահանջներին և յետոյ գէթ մի քանի ժամ հանգիստ առնելու, որին այնքան կարիք ունին: Թագաւորը սակայն, մըղուած որսի տենչից, թէ մարդկանց թէ ձիերին թողնում է անտառում և միայնակ ընկնում է մի սև եղնիկի ետևից՝ առանց նկատելու իր կորած տարածութիւնը:

Տեսարանը, կարծես կախարդական մի հարուածով, կերպարանափոխ է լինում, փշալից անտառին յաջորդում են թաւուտ պուրակներ, ուր գգուիչ զեփիւռն անցնում է խայտալով. զմրուխտ մարմանդներից ցայտում են վճիտ, կենդանի աղբիւրներ. ծառերը, երփներանգ ծաղիկներով զարդարուն, կքում են պտուղների տակ. բաղեղները հովանոցների շուրջն այնպէս խիտ փաթաթուած են, որ աչքը ներս թափանցել չի կարող. կալիկները, ուրախութիւնից արբշիռ, ինչպէս

և արջուկները. խայտալով մագլցում են ճիւղերն ի վեր. մեղուները բզզում են. հաղարաւոր թռչուններ երգում են հովանոցների ծածկի տակ և, ջինջ լճերի ափին, երփնագեղ վզերով սիրամարգներն են սիգաձեմ մանգալիս։ Մալինի գետակը, մի արծաթեայ հեղուկ գօտով, շրջապատում է այս պարտէզները, որոնց գեղեցկութիւնն յիշեցնում է Ինդրայի դրախտը։ Ի՞նչ աւելի քաղցր վայելք աչքի համար քան դիտել այս ծառաստանը, ուր ճգնաւորներ են ապրում։ Այնտեղ անդադար բարձրանում է զոհերի ծուխը և հնչում են երգի ու օրհնութեան ներդաշնակ ելևէջներ։ Իրանց ցանկութիւնները զսպած Բրշիներ, հմուտ Վեդայի գիտութեան, զբաղուած են աւանդական մեկնաբանութեամբ. ամէն կողմից լսւում են վիճաբանութեանց ձայներ։ Այս հարցերն, ի հարկէ, թագաւորին չեն էլ հետաքրքրում, և նա լարում է աղեղը շնչասպառ եղած եղնիկի վրայ։ Երկու ճգնաւոր վազում են զէպի որսորդը՝ պաղատելով, որ խնայէ նուիրական անտառում, մենակեացների հովանու տակ ապրող այս սիրուն կենդանուն։ Նրանք հաղորդում են Դուշմանտային, որ միաբանութեան գլուխը Կանվան է, Կասիապայի որդին։ Թագաւորն յայտնում է, որ, առիթից օգտուելով, ուզում է իր յարգանքի հաւատին ցոյց տալ տարիներից ի վեր ապաշխարութեան գանձին հարստացած այդ անբիծ անապատականին։

Բոցակէզ արևն արդէն սկսում է թեքուել դէպի հորիզոնը. այս այն ժամն է, երբ մարդիկ յոգնութիւնից դադար են առնում։ Ահա և Կանվայի մենաստանը, ծառերի տակ դէս ու դէն ցանուցիր խոզանայարկ

խզիկների մէջտեղ։ Դուշմանտան պատրաստւում է մտնել այնտեղ, երբ լսում է թարմ ձայներ մօտակայ անտառակից նորաբաց յասմիկների ետեւից։

Մեր հերոսը, հետաքրքրութիւնից, մեղմով դէն է տանում դալարահիւս վարագոյրը և տեսնում է երեք դեռատի աղջիկներ, որոնք, ցնցուղը ձեռներին, ծառերի արմատներն են ջրում։ Երեքն էլ հագած են կեղեւեայ կոշտ զգեստներ, անպատական կանանց նման։ Բայց մի՞թէ տասնըչորս տարեկան հնդկուհին, իր կեանքի գարնան մէջ, պէտք ունի զարդ ու զարդարանքի։ Երեք ընկերուհիների մտքովն անգամ չի անցնում, որ այդ պահուն մի ակնաւոր այցելու լրտեսում է իրանց, դրա համար էլ շաղակրատում են մի շնորհագեղ անփութութեամբ։ Նրանցից մին միամտաբար գանգատւում է, որ պարեգօտը շատ պինդ է կապած և նեղում է։ «Շակունտալա,— պատասխանում է ընկերուհիներից մին,— մեղաւորը պարեգօտդ չէ, այլ երիտասարդութիւնդ, որ օրէցօր ուռեցնում է կուրծքդ»։ Եւ մի արագ շարժումով թուլացնում է պինդ կապերը։ Թագաւորը, շատ պարզ է, ոչինչ բաց չի թողնում այս զուարճախօսութիւններից և անթարթ նայում է նրան միայն, որի անունն, ինչպէս այս ըստ-պէս ասացինք, Շակունտալա էր։ Նա գեղեցիկ է որ-պէս գեղեցկութիւնն ինքը. այս անբիծ, գեղաժպիտ, սեւաչեայ կոյսի մօտ նսեմանում են իր ընկերուհիները։ Ո՞վ կ'ասէ թէ ճգնաւորի աղջիկ է։ Իր հագած բիրտ շորերի մէջ անմահի նման է երեւում. կարծես Շրին*)

*) Շրի կամ Լաքշմի, բախտի աստուածուհի.

ինքը լինէր երկիր իջած մարդկանց հրապուրելու համար։

Դուշմանտան էլ հէնց այդ էր ասում։ Յանկարծ Շակունտալան իրար է անցնում և, երկիւղի ճիչեր արձակելով, վազում. մի ժպիրհ մեղու ուղում է անպատճառ թառել օրիորդի չքնաղ դէմքին։ Երկու ընկերուհիներն, հանաքով, խորհուրդ են տալիս օգնութեան կանչել Դուշմանտային, որի պաշտպանութեան տակ են գտնւում վանքի անտառակները։

Գեղեցիկ առիթ իրան ցոյց տալու համար։ Թագաւորն այլ ևս չի դիմանում։ Դուրս գալով իր դիրքից՝ առաջանում է դէպի չնաշխարհիկ խումբը և ներկայանում է որպէս մեծ թագաւորի մարդկանցից մէն, որ անցնելով այդ կողմից՝ ուզեցել է այցելել սրբակրօն Կանվային։

Աղջիկները ցոյց են տալիս բարձրաստիճան հիւրին պարտ ու պատշաճ մեծարանք. նախ՝ ջուր են բերում ոտները լուանալու, յետոյ՝ բրնձից, պտուղներից ու կաթից պատրաստած ապուր են տալիս։ Ապա յայտնում են, որ Կանվան գնացել է անտառ՝ աստուածներին զոհ մատուցանելու և շուտով կը վերադառնայ. թող ուրեմն պատուական հիւրը բարեհաճի ներողամիտ լինել և հանգիստ առնել այս մամռէ նստարանի վրայ, ծառերի հովանու տակ։

Թագաւորի ուղածն էլ հէնց այդ է. այս բոպէին նրան հետաքրքրողը ճգնաւորները չեն։ Շակունտալան, կաս կարմիր կտրած, հեռու քաշուել է ձևացնում, գուշակելով, կարծես, այն զգացումները, որոնց պատճառը

ինքն է, մինչ թագաւորը խօսքի է բռնուում նրա ընկերուհիների հետ և հարցնում նրանց.

«Ինչո՞ւ ձեր այս չքնաղ ընկերուհին աշխարհից այսպէս հեռու է ապրում, անտառի խորերում։ —Մթթէ կարող է նա սերած լինել մի ճգնաւորից, որ հրաժարուած է աշխարհային կրքերից»։

Այս օրիորդները պատասխանելու համար նաղ անել չգիտեն. իսկոյն պատմում են թագաւորին, որ իրանց ընկերուհին «վանահօր հոգեղուստրն է և ոչ հարազատ աղջիկը նա պատուղն է մի այլ անպատականի և յաւերժահարսի սիրոյ։ Ժամանակով Աստուածներն երկիւղ կրելով Վիսվամիտրա միայնակեացի խըստակրօն ճգնութիւններից՝ զարնան սկսելու հետ՝ ուղարկեցին նրա մօտ չքնաղագեղ Մենակային...»

Այլ ևս, ամօթածութիւնից, շարունակել չեն կարողանում։ Դուշմանտան նրբամտարար խնայում է պատմութեան վերջը այս դեռատի խելառներից։ «Շարունակութիւնն հասկանալի է, — ասում է ժպտելով,— յաւերժահարսների արածը միշտ այդ է»։ Այս բոլորն իսկապէս այնքան յափշտակիչ էր թագաւորի համար, որ նա ուրախութեամբ յանձն կ'առնէր ամբողջ օրն այս չքնաղ ընկերութեան մէջ անցկացնել, եթէ յանկարծ մի մեծ աղմուկ չլսուէր հեռուից։ Արքայական շքախմբի մարդիկը, իրանց տիրոջ բացակայութեան վրայ մտատանջ, դուրս են գալիս որոնելու նրան և թափւում են նուիրական անտառը։

Դուշմանտան չի ուզում իր ով լինելն յայտնել. իսկոյն հրաժեշտ է տալիս երեք ընկերուհիներին։ Միայն Շակունտալան է որ լռում է, երբ ընկերուհիները

խնդրում են թագաւորին շուտով նորից այցելել վանքը։ Բայց ինչքան չլինի յաւերժահարսի աղջիկ է. այս անիրաւը, որի նուրբ յօնքերը կարծես մի մի աղեղ լինէին և որ քիչ առաջ որպէս թէ շտապում էր խոյս տալ անտառակից, այժմ, ընդհանուրին, ընկերուհիների ետև կանգնած, գնալ չի ուզում. այնպէս է ձևացնում, իբր թէ զգեստը անցել է մի աշօկայի ճիւղին և, շուռ գալով, մի քաղցր անկարկ է ձգում թագաւորի վրայ։ Մեր հերոսը, արբշիռ, հեռանում է։ Մի երկչոտ աղջիկ նուաճեց սիրտը նրա, որ տիրել էր երկրագնդի կէսին։

Այժմ Դուշմանտայի սրտովը չէ խկոյն Հաստինապուրա վերադառնալ։ Նա իրան հետևող գնդին հրամայում է բանակ դնել մենաստանի շուրջը. որսորդի աղեղն առ ժամանակ դադար է առնում, այնպէս որ առիւծներն ու եղնիկները կարող են աներկիւղ զբօսնել։ Պուրուհան զարմի ներկայացուցիչն անձնատուր է լինում այն բոլոր քաղցր անմոռութիւններին, որոնք յատուկ են սիրահարներին։ Մերթ, ջրի եզերքին առանձին ման գալիս, աշխատում է այնքան առաջ գնալ, որ տեսնէ սիրելուհու հիւղակը. մերթ, իբրև մտերմի, իր ծաղրածու Մադհավայի առաջ է բաց անում սիրտը.

«Դու դեռ չգիտես, ովն է աշխարհի վրայ ամենագեղեցիկ բանը. որովհետև չես տեսել»։ Եւ, խանդավառ, սկսում է նկարագրել այն կատարելութիւնները, որոնք շլացրել են իր աչքը.

«Ծաղիկ, որ դեռ չի հոտոտուած. քնքոյշ կոկոն, որ դեռ ոչ մի եղունգ պոկ չի տուած, անաղարտ մարգարիտ, նոր մեղր, որի համը դեռ չի առնուած. ով է

լինելու այն երջանիկը, որ բախտը տալու է սրան»։

Բայց ե՞րբ են պալատականները բարի խորհուրդ տուել իրանց վեհապետներին։ Մաղհավան, որ քաղաքներից հեռանալու սէր չունի, շնորհաւորում է թագաւորին, որ ինքնաչարչարման նուիրուած անտառը զուարճալի զբօսավայրի վերածեց և յորդորում է երես չթեքել բախտից, այլ աշխատել տիրանալ գեղեցկուհուն, քանի դեռ նա ինքնագլուխ իւղով գլուխն օծող*) որ և է ճգնաւորի սեփականութիւնը չի դառած։

Դուշմանտան, ինչպէս առհասարակ ամէն անկեղծ սիրահար, երկչոտ էր և փափկանկատ. նա չէր համարձակում հաւատալ, որ իր սիրոյ փոխարէն սէր կը գտնէ։ Չնայած Շակունտալայի վերջին նայուածքը խրախուսիչ էր, բայց էլի վարանում է, վանք վերադառնա՞թէ չէ։

Այդ միջոցներին բանակատեղին են հասնում երկու տարբեր պատգամաւորներ. նախ՝ մի զօրապետ, մայր թագուհու կողմից ուղարկուած, գալիս է յիշեցնելու թագաւորին, որ շուտով մայրաքաղաքում տեղի է ունենալու մի կրօնական արարողութիւն, ուր թագաւորի ներկայութիւնն անհրաժեշտ է։ Երկրորդը՝ հետևեալ խոնարհ աղերսանքն է, որ երկու Ռիշի ներկայացնում են միապետին։ Գերեզմանիկ Կանվան դնացել է ուխտի. չար ոգիներն, օգուտ քաղելով նրա բացակայութիւնից, խանգարում են ծէսերն ու, գիշերները, ահաբեկում են վանքի բնակիչներին։ Արդ

*) Անտարակոյս գլուխը միջատների խայթուածքից զերծ պահելու համար։

պաղատում են լուսնազարմ արքային պաշտպան կանգնել երկիւղած մենաստանին և դալ մի քանի գիշեր այնտեղ անցկացնել։

Թէ ինչ ընտրութիւն էր անելու Դուշմանտան իր մօր ցանկութեան և վանականների հրաւէրի միջև, դժուար չէ գուշակել։ Ծաղրածու Մաղհավային ուղարկելու է թագուհու մօտ ներում խնդրելու վեհապետի քացակայութեան համար, իսկ ինքն շտապելու է վանք, հրճուելով որ առիթ ունեցաւ նորից տեսնելու նրան, որի պատկերն այնպէս համակել էր իր սիրտը։

Բ

ՕԳՈՍՏԱՓԱՌ վեհապետի ներկայութիւնն հրաշք գործեց. վամպիրներն այլևս չէին համարձակում երևալ. բայց հիմայ էլ մի ուրիշ ցաւ եկել էր տխրեցնելու վանքը։ Շակունտալան, ամէնքի ուրախութիւնն ու պարծանքը, մի տարօրինակ ցաւով էր բռնուած։ Այտերը դժգոյն, մարմինը նիհարած, հալ ու մաշ էր լինում խորշակահար բաղեղի նման։ Անբուժելի ցաւ. ոչ ուրինա խոտի արմատը, ոչ նուիրական լճերից հանած կաւը, ոչ էլ զոհերի օրհնած ջուրը չէին զովացնում նրա հրաշագեղ մարմինը, որ այրւում, սպառւում էր տենդից։

Վեսաքան*) նոր էր սկսում. մի սաստիկ շոգ օր, իրիկնադէմին, դեռատի հիւանդը գնացել էր Մալինիի ափը՝ փոքր ինչ զովանալու, այն տեղերում, ուր ժամանակով Կանվան գտել էր նրան։ Մի թեթև սիւք կնճռում էր ջրի մակերեսը

*) Մայիս ամիսը, Հնդկաստանի ամենաշոգ ժամանակը։

և նուէնոֆարները մեղմով բաց էին անում իրանց փակ բաժակներն արևի տապից։ Շակունտալան հանգստանում էր՝ անփութօրէն պառկած եղէգների վրայ, և երկու ընկերուհիներն հողմահարում էին նրան լոտոսի տերևներով։

«Է՜հ, սիրելիներս,— ասում էր հիւանդն յուսահատական ժպտով,—ինչի՞ համար է ձեր այդ հողմահարելը, դրանով իմ ցաւս չի բժշկուի»։

Ի՜նչպէս ամեն ինչ կերպարանափոխ եղաւ այնքան կարճ միջոցում։ Ոչ նախկին չարաճճիութիւններն էին մնացել, ոչ էլ այն տղայական հանաքները։ Հաւատարիմ ընկերուհիները զուր էին աշխատում Շակունտալայից հիւանդութեան պատճառն իմանալ. արդեօք, ինչպէս ենթադրում էին, արևո՞ն էր խփել։ Ո՛չ, միայն տապը չէր կարող այս աստիճան տխրութիւն ու հիւծում առաջ բերել։ Արդեօք ա՞յնպիսի մի ցաւ էր, որ իր մանկութեան ընկերուհիներն անկարող էին սփոփել։ Ինչո՞ւ յամառաբար թաքցնէր գաղտնիքն այնպիսիներից, որոնք այնքան կաթոգին սիրում էին նրան։

Շակունտալան տեղի է տալիս վերջապէս ընկերուհիների թախանձանքներին. խոստովանում է իր սէրը դէպի թագաւորը. զսպուած կրքի հեղեղն է ոլ սկսում է յորդել երկչոտ ու գոռող էակի կրծքից։

Կարիք չկար խոստովանութեան. թագաւորի երևալուց ի վեր խեղճ աղջկայ տխրութիւնը բնաւ խուսափած չէր ընկերուհիների աչքից։ Նրանք, մատանջ, իրար երես են նայում և խորհրդակցում։ Ի՜նչ շուտ պաշարեց սէրն այս մատաղ աղջկայ սիրտը, աղջկայ, որի միակ հաճոյքը ծաղիկներ խնամելն էր ու

անտառի այծեամներին փայփայելը։ Եթէ դիւցազնը սի-
րով չպատասխանէ սրա սիրուն, սա, այս ակնախտիղ
ծաղիկը, պիտի թօշնի. պիտի մեռնի այս անոյշ կոյսը,
որի սիրտը կիրքն է բոցավառած։

Յանկարծ, մեծ դժուարութեամբ, գլուխը բարձ
բացնում է Շակունտալան և իր եղեգնեայ անկողնի
վրայ նստելով,

«Ա՜խ, սիրելի ընկերուհիներ,—բացագանչում է,
կարծես, պատասխանելու համար իր ընկերուհիների
մտքերին,— եթէ թագաւորն ինձ չի սիրելու, էլ մի՛
սպասէք, մահուան ջուր սրսկեցէք վրաս, կնճիթի սեր-
մեր շաղ տուէք»։

Բարեբախտաբար թագաւորն այնտեղ է և, ինչպէս
առաջին օրը, ծառերի ետև թաք կացած, վրայ է հաս-
նում երեք ընկերուհիների խօսակցութեանը։ Զոհի ա-
ւարտումից անմիջապէս յետոյ՝ նա քայլերն ուղղել էր
դէպի այս վայրերը Շակունտալային հանդիպելու յոյսով։
Ուրիշ որտեղ կարող էր հաճոյք գտնել քան ուր իր
սիրելուհին էր։ «Հոգեհատորս այստեղից է անցած,—ա-
սում էր ինքն իրան վարդագոյն արմաւենիների միջով
դէպի գետափ գնալով.—քայլերն իրանց հետքերը թողել
են աւազի մէջ։

«Ո՜վ կամա, դու որ ծաղկով ես սպառազինուած,
ինչո՞ւ այդքան անգութ ես իմ նկատմամբ. ինչո՞ւ ես
չարչարում ինձ այսքան, ինձ որ անվերջ զոհերով քո
փառքի համար եմ միայն աշխատած»։

Բայց ինչ որ Դուշմանտան իր խակ ականջներով
լսեց, բաւական էր ցրելու ամէն երկիւղ։ Նա յանկարծ
վրայ պրծաւ։ Շակունտալան, նրան տեսաւ թէ չէ՝ ա-

մօթղածութիւնից մի ճիչ արձակեց, կարծես, օգնութիւն խնդրելու, մինչ խոհեմ ընկերուհիները խոյս տուին հեռացան։

«Անմահն աղջիկ,—ասում է թագաւորը,— մինթէ տարակուսում ես իմ սիրու վրայ։ Մինթէ մինչև հիմայ չգիտէիր, որ քո այն առաջին ակնարկդ յափշտակել է սիրտս և այդ խոշոր աչերդ համակել են ամբողջ կեանքս»։

Եւ երբ մանկամարդ աղջիկն սկսաւ ընդդիմանալ հէնց այն մարդու գգուանքներին, որի համար, մի բոպէ առաջ ուզում էր մեռնել,

«Ինչու՞ ես վանում ինձ, սիրելիս,—յարեց թագաւորը.—մենք երկուսս էլ պատկանում ենք Ֆշատրիյաների*) դիւցազնական ցեղին. էլ ինչը կարող է արգելք լինել մեր ամուսնութեան։

—Սպասեցէք, տէր Արքայ,—կմկմում է Շակունտալան,— մինչև հայրս վերադառնայ. իմ համաձայնութիւնը կախուած է նրա հրամանից։

—Չէ, պաշտելի օրիորդ, դուք տեղը մի խղճահարի. դու ինձ անձնատուր լինելով կրօնի ոչ մի օրէնքի դէմ մեղանչած չես լինի. հաւատա՛ ինձ, որ քեզ հետ խօսում եմ ես ամենայն անկեղծութեամբ, որին և արժանի ես։ Եղիր ամուսինս և իմ բոլոր գանձերը քոնն են լինելու։ Այդ կոշտ հագուստիդ փոխարէն, որոնք վիրաւորում են անօրինակ գեղեցկութիւնդ, կրելու ես թանկագին կերպասներ. ադամանդազարդ գինդերն

*) Ֆշատրիյա (մարտիկ)—զինուորական եւ արքայական դասակարգին պատկանող. այս դասի պարտականութիւնն էր ժողովրդին պաշտպանել, ողորմածութիւն եւ զոհ։

ընկերանալու են աստուածագեղ գլխիդ մէն մի շարժումին. շողշողուն քայլերն ու ապարանջանները գգուելու են պարանոցդ ու բազուկներդ՝ գծագրուած նոյն ինքն սիրուց։ Թող ուրեմն այս իսկ ըսպէիս մեզ միացնէ փոխադարձ համաձայնութեամբ մի ամուսնութիւն Գանդհարվանների*) օրէնքով»։

Ասում և ծունգի է գալիս. իրան որ ճնաբ, կարող էր իբրև թագաւոր հրամայել էլ, բայց Աստուածներն են անշուշտ ներշնչում երկչոտ կոյսին, և դիւցազնի կրքոտ եռանդը կասեցնելով,

«Ես քո խօսքիդ հաւատում եմ,— ասում է.—եթէ ճիշտ է որ քո իղձերին դիմելով ես՝ սուրբ պատուիրանների դէմ մեղանչած չեմ լինի, այդ դէպքում լսիր, թագաւոր, իմ պայմանը։ Երդուիր, որ, եթէ մեր ամուսնութիւնից որդի ծնուի, նրան տալու ես գահաժառանգի տիտղոսը և օրինաւոր յաջորդդ նա է լինելու»։

Այսպիսի դէպքում սիրատարփ Դուշմանտայի աչքին ինչ արժէք կ՝ունենար երդումը։ Նա կրկնապատկում է իր խոստումները։

«Մի, մի վախի, պաշտելի՛դ իմ. ես քեզ տանելու եմ իմ մայրաքաղաքը. դու միայն ես վայելելու ամուս-

*) Մի ամուսնութիւն, որ ամուսնացողների փոխադարձ համաձայնութեամբ է տեղի ունենում. առանց ծնողների կամ խնամակալների միջնորդութեան. կոչւում է Գանդհարվանների (երկնային երաժիշտներ) օրէնքով կամ եղանակով եղած ամուսնութիւն. եւ թոյլատրելի էր Քշատրիյաներին (զինուորական եւ արքայական դասակարգեր)։

նիդ ամբողջ սէրը, և, ինձնից յետոյ, որդիդ է թագաւորելու իմ հպատակների վրայ»։

Այս խոստումների վկաները Աստուածներն են։ Շակունտալայի երազածը ոչ հարստութիւն է ոչ թագաւորութիւն. նա միայն հերոսին իրան է տենչում, նրան է սիրում։ Դրա համար էլ այլևս դիմադրելու ոչ մի պատճառ չունի, և, յաղթականի ջերմ գրկախառնութեան մէջ, հանգում է նրա ամօթածութեան վերջին ընդվզումը։

Արդէն գիշեր է. այս խորհրդաւոր ամուսնութեան ջահերը կայծռուիկներն են միայն, որ գեղեցիկնում են մարմանդը կանաչաւուն նշոյլներով. նուագածուն, անտեսանելի, քամին է, որ սօսաւելով անցնում է Մալինիի եղեգնուտների վրայով. մինչ, ծաղկած արմաւենիների տակ, սոխակի հառաչն հնչում է որպէս սիրոյ երգ։

Կանվայի դստեր ամուսնութիւնը Պուրուեան զարմի հետ՝ արդէն կատարուած իրողութիւն է։ Շակունտալան յաւէտ հրաժեշտ տուաւ իր այնքան քաղցր կոյս անուան։

Աւաղ, ինչո՞ւ թագաւորներն իրաւունք չունին ճգնաւոր դառնալու։ Շակունտալայի համար փայլակի արագութեամբ անցաւ այս մեղրալուսինը և, Հաստինապուրայի բոլոր բժիշկներից լաւ, սէրը բժշկեց մեր մանկամարդ հիւանդին։ Սակայն թագաւորի ներկայութիւնն այլևս անհրաժեշտ չէր վանքում և պարտականութիւնը նրան ուրիշ տեղ էր կանչում։ Նա պարտաւոր էր միանալու իր ուղեկիցներին, որոնք բանակ էին դրած վանքի սահմաններում, և վերադառնալ մայ-

բաքաղաք, ուր ժողովուրդն անհամբեր նրան էր սպասում։

Ի՜նչ արցունքներ ասես որ չթափուեցան. ի՜նչ խոստումներ ասես որ չկոխանակուեցան հրաժեշտի օրը։ Ինչպէս բաղեղ, որ պատատուում է վիթխարի ծառին, Շակունտալան պոկ չէր գալիս իր ամուսնու գրկից։

«Սրբիր արցունքդ, հոգեակ,—ասում էր թագաւորը,—մեր այս բաժանումն երկար չի տևելու. շատ չանցած՝ մի արտաքոյ կարգի շքախումբ պիտի գայ մեծ պատուով առաջնորդելու քեզ դէպի իմ պալատը։ Մինչ այդ՝ սիրտս եմ քեզ մօտ աւանդ թողնում, լաւ պահիր. իսկ այս մատանիս թող ինայ մօտդ յիշատակ այն երջանկութեան, որ շուտով պիտի վերածնուի»։

Այս ասելով՝ Շակունտալայի մատն է անցկացնում մի արծաթ մատանի, որի վրայ գրուած էր իր անունը. այսպիսով արձակում է այն մանեակը, որ ձևացած էր իր վզին երկու դողդոջ բազուկներից, և ճանապարհ է ընկնում սրտաբեկ։

Կանվան հէնց այդ օրը վերադառնալու էր վանք. թագաւորը մեծ մտատանջութեան մէջ էր։ Արդեօք ի՞նչ պիտի ասէր այդ ճգնաղգեաց խստակրօն անապատականը, երբ տեղեկանար, որ աղջիկն այնպէս անճնատուր էր եղած։ Արդեօք չէ՞ր անիծելու նրան և չէ՞ր ընդդիմանալու իրանց ամուսնութեան, երբ աղջիկն ընտրութիւնը կատարել էր առանց հօր հաւանութեան։ Այս խռովայոյզ մտքերով մտաւ քաղաք, որ, զարդարուած, սպասում էր նրա ընդունելութեան։

Գանք Շակունտալային. նա չէր համարձակում միւս վանականների հետ առաջանալ դէպի սուրբը նրան դի-

մաւորելու համար։ Շփոթուած, երկչոտ, կանգնած էր հեռուն՝ աչերն, ամօթից, գետնին յառած։ Բայց Բիշինները, օժտուած աստուածային գիտութեամբ, կարող են թափանցել գաղտնիքների խորը. նրանք կարդում են անցեալն ու ապագան։ Կանվան, հէնց որ վերադառնում է տուն, կանչում է սարսափահար խեղճ աղաւնեակին իր մօտ և, ներողամտութեամբ լի, ասում նրան.

«Անհոգ կաց, զաւակս, այն կապերը, որ դու հաստատել ես, առանց իմ խորհրդի, օրէնքի դէմ մեղանչում չեն։ Միմեանց համար բարախող երկու սրտերի միութիւնը առանց Բրահմանի աղօթքի էլ նուիրագործուած է։ Դուշմանտան արդարակորով և վեհանձն է. սէրը քեզ նրա կինը դարձրեց. ուրախ եղիր, Շակունտալա, դու մի այնպիսի որդի ես աշխարհ բերելու, որ նրա համբաւը պիտի հաւասարուի Դուշմանտայի համբաւին, նրա յաղթութիւններն ևս աւելի պիտի ընդարձակեն արդէն ընդարձակ տերութեան սահմանները. ամենուրեք թշնամիները փախուստ են տալու նրա յաղթական դրօշակի առաջից և նա մի դիւցազնական ցեղի հայրը պիտի լինի»։

Տաղնապը վերջացաւ. Շակունտալայի առաջ բացւում է մի յուսալից ապագայ։ Հեղահոգի աղջիկն, երախտագիտութիւնից, ընկնում է անապատականի ոտքերը, հայցում է նրա օրհնութիւնը իր և իր ամուսնի համար։ Կանվան տարածում է ձեռներն իր առաջ խոնարհած մատաղ գլխի վրայ։

«Սիրելի զաւակս, մի՞թէ կարելի է քեզ մի բան մերժել, քեզ, որ միակ սփոփանքս ես իմ ծերութեան

օրերում։ Աղօթում եմ Աստուածներին, որ Պուրուի ցեղն ամենարարձր առաքինութիւններով միշտ պանծայ և նրա տիրապետութիւնը սահման չունենայ»։

Մենաստանում, որ մի բոպէ ոգի էր առել թագաւորի ներկայութիւնից, կեանքը վերստացաւ իր խաղաղ ընթացքը։ Կանվայի աղջիկն անհամբեր սպասում էր միապետի խոստումների իրագործմանը։ Անցան օրեր, շաբաթներ. ոչ մի շքախումբ չանցաւ երկիւղած առանձնարանի շրջափակից ներս. ոչ իսկ նամակ կամ լուր Հաստինապուրայից։ Ի՞նչ էր արդեօք պատճառը։ Ի՞նչու համար Դուշմանտան, որ այնքան դժուարութեամբ բաժանուեց իր սիրելուհուց, մոռացաւ այսքան շուտ իր երդումը։ Անուշիկ Շակունտալան, յուսահատութիւնից, ամեն օր գնում էր արտասուելու բաղդիշների այն թփուտքում, որ վկայ էր եղած իր չքացած երջանկութեան։ Այսքան ծանր վիշտը գուցէ ընկճէր նրան, եթէ Աստուածները նրան չշնորհէին մի մեծ սփոփանք. նա աշխարհ բերաւ մի որդի*), որ, առաջին օրից, այնքան նման էր իր փառապանծ հօր։ Ոյժն ու գեղեցկութիւնը նրա սեփականութիւնն էին։ Նրա փոքրիկ ձեռներում պարզ գծագրուած էր մի անիւ**)։ Վանականը փութաց զոհերով ու ծէսերով տօնել այս պատուական զարմի աշխարհ գալը։ Մանուկը մեծացաւ անտառի կենսունակ օդի մէջ և, աստուածների որդուց նման, զարգացաւ գերբնական արագութեամբ. հալա-

*) Համանուն դրամայի մէջ Շակունտալան որդի է աշխարհ բերում Դուշմանտայի մօտ գնալուց յետոյ, երկնքում։

**) Խորհրդանշան աշխարհակալութեան։

ծում էր մատաղաշ փղերին, զսպում էր կորիւններին և, ի մեծ զարմանս բոլորի, հեծնում էր նրանց վրայ։ Վանականների սիրելին էր նա, ինչպէս երբեմն իր մայրը, երբ դեռ երեխայ էր։

Այս տղան, որին սպասում էր մի փառաւոր ապագայ, մինչև վերջը վանքում ապրել չէր կարող։ Զգիտենք, արդեօք Կանվան մի գերբնական կանխատեսութեամբ թէ պարզապէս իր հոգեդուստրի սիրուց, մտածեց որ թէ մօրը թէ զաւակի համար անպատշաճ էր այլևս վանքում մնալ, և որ արդէն ժամանակ էր երիտասարդ կնոջը՝ գնալու իր ամուսնի մօտ և ճանաչել տալու իր արդէն վեցամեայ որդու իրաւունքները։

Սուրբը հանդիսաւոր կերպով իր մօտ կանչեց բոլոր վանականներին և նրանց հաղորդեց իր որոշումը։ Բերին բազնի վրայ դասաւորեցին օրհնած բրինձն ու հաշտարար ձօները։ Շակունտալան, հագին մի սպիտակ բրդեայ պարեզօտ, երեք անգամ շրջան արաւ նուիրական կրակի շուրջը՝ աջ կողը դէպի կրակը դարձրած, ինչպէս օրէնք էր։ Նրա պարանոցը, թևերն ու սրունքներն այնպէս սքանչելի զարդարուած էին, որ կանայք, բաժանման այս տխուր բոպէին, չկարողացան զսպել իրանց ժպիտն հիացումից։ Խորհրդաւոր բոպէ, երբ դեռատի կինը, Շակունտալան, մնաք բարով էր ասելու իր շրջապատողներին՝ սկսած իր մանկութեան ընկերուհիներից մինչև այն բաղեղը, որ ինքն իր ձեռքով էր տնկել և այն եղնիկը, որին սնուցել էր. նա չի մոռանում մինչև անգամ իր սիրական վիթին, որին յանձնում է իր ընկերուհիների խնամքին։ Արցունքը նրա ձայնը խեղդում է և այլևս չի կարողա-

նում շարունակել։ Անշուշտ նա այդ բոլորին ուրախանում է այն յոյսով, որ շուտով տեսնելու էր այն ապերախտին, որին միշտ սիրել էր։ Իր մթագնած կեանքն յանկարծ լուսաւորւում է և նուազուն աչերը, որոնց երկար թարթիչները, վշտից, ցած էին կախուած, բացւում, փայլում են ինչպէս մի փունջ լոտոս գիշերուայ վերջին։ Բայց այժմ, երբ թողնելու է այն վայրերը, ուր փոխէփոխ ապրած է մերթ երջանիկ մերթ դժբախտ, վնատութիւնը պատում է նրան։

Ի՞նչ է արդեօք հանելու նրա առաջ կոյր բախտը։ Նրան այնպէս անգթօրէն լքող ամուսինն արդեօք ընդունելու է նրան։

«Ո՞հ, հայր իմ,—ասում է հառաչելով,—արդեօք մէկ էլ տեսնելու եմ այս մենաստանը։ Նման նորարոյս սանտալի, որ խլում է լեռան կողից, գնում եմ ապրելու օտար երկրում. ինչպէս եմ դիմանալու»։

Բարեբախտաբար սուրբը հեռու չէ և կարող է սիրտ տալ Շակունտալային։ Նա նրան օրհնում է իբրև հայր և իբրև հոգևոր դաստիարակ։

«Լսիր.—ասում է,—աղջիկս, հօրդ վերջին խրատները։ Ինչքան էլ անտառաբնակ, անծանօթ չենք աշխարհի կարգերին։ Մեծերիդ խօսքին ակնածանքով լսիր և սիրով վարուիր քեզ ընկերակից տիկնանց հետ. ամուսնիդ միշտ հնազանդ եղիր, եթէ նոյնիսկ խըստութեամբ էլ վարուի քեզ հետ. ծառաներիդ վերաբերմամբ հեզ եղիր և չգոռոզանաս։ Այսպիսով միայն երիտասարդ կանայք կարող են տանտիկնութեան պատուին արժանանալ. հակառակ դէպքում՝ ամբողջ տունը կը քայքայուի»։

Յետոյ, կարծես ապագան կարդալով, Կանվան յարում է.

«Այսօր արհամարհուած, մի օր դառնալու ես մի հզօր թագուհի, մայր մի անզուգական մարտիկի։ Այն ժամանակ նորից կ'այցելես մեր այս համեստ մենաստանը, մանկութեանդ անմոռանալի ապաստանարանը»։

Ճգնաւորներն իրանց բարեկամուհուն ուղեկցեցան մինչև անտառի ծայրը, որտեղ նորից են փոխանակւում հրաժեշտի ողջոյններն ու բարեմաղթութիւնները. «Թող քո ճանապարհին քեզ զուարթացնեն ջինջ լճերն ու գով ստուերները. թող հանդարտի հովը, քաղցրանայ փոշին որպէս ծաղկափոշի, և ամենուրեք յաջողութիւնն ուղեկից լինի քեզ, Շակունտալա»։

Պէտք է մեկնել. ուղևորուհին վերջին անգամ համբուրում է հօրը և կարաւանը ճանապարհ է ընկնում։ Մի քանի բոպէ ևս և Շակունտալայի սպիտակ պարեգօտն անհետանում է ծառերի ետև։ Միայն Կանվան է, որ, իր առաքինութեանց շնորհիւ երկրաւոր յոյզերից բարձր կանգնած, իր պարտքը կատարած լինելու գոհունակութիւնն է զգում, մինչ միւսներին պատում է տխրութիւնը։

«Աւաղ,—մրմնջում է մի դեռահասակ ճգնաւորուհի.—էլ ո՞վ է դարձնելու մեզ մեր Շակունտալային։ Նա որ հեռացաւ, այս նուիրական անտառից ծնում է այլևս մի անապատ միայն»։

Գ.

ՎԱՆԱԿԱՆՆԵՐԻ բարեմաղթութիւնները ճանապարհի համար ի դուր չանցան. կարաւանը ողջամբ հասաւ Հաստինապուրա, Պուրուհան տան վաղեմի մայրաքաղաքը։ Հիւղարնակ ճշնաւորները, մեծ քաղաքների պերճութեանց անծանօթ, շլացած, յափշտակուած, նայում են մինչև ամպերը վերացող տաճարներին, սքանչելի մարմարակերտ պալատներին, շէնքերի հոյակապ ճակատներին, մեծակամար դռներին, երկարաշար սիւներին և հսկայական արձաններին։ Այս սքանչելիքներից ոչ մին Շակունտալայի աչքին չի երևում. նա յիշեցնում է իր ուղեկիցներին այն պարտականութիւնը, որի համար եկել էին և, որդու ձեռից բռնած, քայլերն ուղղում է դէպի թագաւորի պալատը։ Նրա համար էականն այն է, որ միապետին անձամբ տեսնէ։ Շատ դժուար բան. պալատն ունի հարիւր դուռ, հարիւրի առաջ էլ հսկում են ամաղոնները և սենեկապանները,

որոնք արգելում են արքայական յարկերի մուտքը։ Ի՞նչ գործ ունին այս կեղեւազգեստ ճգնաւորներն ու այս շքեղազարդ կինը թագաւորի հետ,—մտածում են նրանք։ Սակայն Կանվայի պատկառելի անունն հարթում է ամէն խոչընդոտ և մի պալատական յանձն է առնում զեկուցանել թագաւորին։

Այդ պահուն Դուշմանտան պալատի ներքին յարկերում էր, շրջապատուած իր կանանցիով, որոնք, նրան գրաւելու համար, մրցում էին իրար հետ նազանքներով։ Հանուապատիկա թագուհին, որ քաջ երաժիշտ էր, մի գրգռիչ եղանակով աշխատում էր թագաւորի կրքերը զարթեցնել։ Զուր աշխատանք։ Միապետը մնում է մտաբեր ու երազուն, և մտածում միայն անցեալ երջանկութեանց մասին, որ կարծես պատկերացնում էր շատ աղօտ կերպով։

Հէնց այս մելամաղձոտ դրութեան մէջ էր, երբ սենեկապանը ներս մտաւ ծանուցանելու Կանվայի յղած պատգամաւորութեան գալուստը։ Դուշմանտան զարթնում է խկոյն թմբութիւնից և վանականներին ընդունում է նմանը չտեսնուած շքեղութեամբ։ Մեծ դահլիճում, զարդարուած ոսկով ու ծիրանով, խնկեղէնները վառւում են արծաթեայ բուրանոցներում և երփնաշող ծաղիկները, փունջ փունջ, ցած են կախւում թաղարներից։ Թագաւորը բազմած է մի ականակուռ գահի վրայ և գեղեցիկ սարկուհիներն հողմահարում են նրա գլխի վերև։ Թագաւորի ձախ կողմում նստած են հարեմի տիկինները, պճնուած ամենաթանկ զարդերով, իսկ, աջ կողմում, խմբուած են, աւագութեան կարգով, բանաստեղծները, աստղագէտները, բժիշկները, ներբող-

ասացները, ծաղրածուներն ու պալատի բոլոր աստիճանաւորները։

Հիւրերն առաջնորդւում են ներս. թագաւորի պատրաստութիւններն ի զուր չէին. վանականներն, այս անօրինակ պերճութիւնից շլացած, խկոյն երկրպագում են միապետին և ասում.

«Փառք արքայիդ։ Ահաւասիկ քո հաւատարիմ Շակունտալան, որ գալիս է անտառից իր որդու հետ միասին»։

Յետոյ, ինչպէս հրահանգել էր իրանց մեծաւորը, Շակունտալային թողնում են մենակ թագաւորի ու պալատականների մօտ և դուրս են գալիս։ Ճգնաւորներն ինչ գործ ունեն աշխարհի ունայնութեանց օթեւանում. նրանք անմիջապէս վանք են վերադառնալու։ Գալով իրանց ընկերուհուն՝ նա համեստ բայց անյողդողդ կերպով մօտենում է գահին և ասում.

«Յիշում ես, Տէր արքայ, մի օր, եղնիկներ որսալիս, առաջին անգամ ինձ պատահեցար հօրս՝ Կանվայի՝ վանքում։ Դեռ անխզելի գրաւականներով քեզ հետ չէի կապուած, երբ պայման դրի, որ օրինական ժառանգ ես ճանաչելու մեր ապագայ որդուն։ Այժմ այդ որդին քո առաջ կանգնած է. ժամանակը լրացել է. ճնում է, Տէր արքայ, որ մեր վաղաժամ բայց երջանիկ սիրոյ պտուղն յայտարարես արքայազն և թագաժառանգ»։

Թագաւորն, այս խօսքերի վրայ, պարզապէս ապշում է և, դառնալով դէպի պալատականներն, ասում.

«Այս բանսարկուն ո՞րտեղից լոյս ընկաւ... ես... ամուսնացած լինիմ սրա հետ... Այսպէս էլ սուտ խօսել

կը լինի՞... Լսիր ինձ, այ կնիկ, ես քեզ ընաւ չեմ ճանաչում, ոչ էլ որ և է կապ եմ յիշում իմ ու քո միջև պարտքի կամ սիրոյ»։

Այսքան բացարձակ մի ուրացում շանթահարեց Շակունտալային։ Կսկիծից մի բոպէ կարծես ուշքից գնաց. շրթները, դողդողուն, ոչ մի բառ արտասանել չեն կարողանում, բայց նրանց փոխարէն աչքերն են խօսում և այնպէս վայլատակում, որ կարծես ուզում էին շանթահարել ուխտադրուժին։ Սակայն յաղթում է նա իր այս առաջին վրդովումին։ Վանականութիւնը սովորեցրել էր նրան զսպել ինքն իրան, որով կարողանում է յարել բոլորովին հանդարտ ձայնով.

«Ինչո՞ւ ես վիրաւորում ինձ քո ամբողջ պալատականների առաջ։ Ի՞նչպէս կարող ես մոռանալ ամէն ինչ որ տեղի է ունեցել մեր երկուսի միջև։ Ես որ մենակ էի, կարծում ես քեզ տեսնող չկա՞ր։ Արևը, լուսինը, կրակն ու ջրերը, երկինքն ու երկիրը, ցերեկն ու գիշերը վկայ են քո դէմ։ Պաղատում եմ, հաւատա խօսքերիս և ես քեզ պիտի ներեմ, որ այսքան ժամանակ ինձ թողեցիր երեսի վրայ, ինչպէս որ Աստուածները ներում են իրանց յանցանքի վրայ զղջացողներին»։

Այս անգամ պալատականներն իրանց զայրոյթը զսպել չեն կարողանում և սկսում են տրտնջալ.

«Այսքան էլ համարձակութիւն. գալ այսպէս հրապարակով մի այսպիսի պատուութիւն անել. այսպիսի ոճով խօսել ամենից մեծ թագաւորի ներկայութեանը. բայց անհերեսութիւնն էլ չափ ունի»։

Թագուհիները, իրանց ախոյանի գեղեցկութեան նախանձելով, բարձրաձայն յարում են.

«Անմեղութեան ու առաքինութեան կերպարանքը միայն ունի սա։ Շուտ, շուտ թող տանին այս սուտ ճգնաւորին, այս անպատկառ թափառականին կրկին իր անտառը. ի՞նչ իրաւունքով համարձակեց մուտք գործել այս պալատը»։

Շակունտալան, մի արհամարհական ակնարկ ձգելով իր նախանձորդների վրայ, հպարտութեամբ պատասխանում է.

«Տիկիններ, ինչ իրաւունքով եկած լինելս էք հարցնում—այն իրաւունքով, որ կինն ունի իր մարդու վրայ։ Մի՞թէ չգիտէք, խեղճ արարածներ, որ կինը իր մարդու կէսն է։ Երբ մարդը, կեանքի մէջ գնում է նեղ կածաններով կամ իջնում նոյնիսկ մեռելների ստորերկրեայ թագաւորութիւնը, հաւատարիմ կնոջ պարտքն է յաւիտեան նրան հետևել. կինը մարդու միաժամանակ թէ բերկրանքն է թէ պարտքը, թէ մխիթարութիւնը թէ ոյժը։ Նա է ծնելութեան յաւիտենական արտը բոլոր մարդկանց համար. առանց նրա սրբերն անգամ կարող չեն որդի աշխարհ բերել։ Ինչո՞ւ ես արհամարհում, Տէր արքայ, այս մանկան, որ գալիս է մօտդ քեզ համբուրելու տենչով։ Ի՞նչ կայ հօր համար աւելի քաղցր քան որդու համբոյրը։ Օրինակ առ մրջիւններից, որոնք իրանց ձուերը ոչ թէ կոտրում են այլ սնուցանում։ Ի՞նչպէս կարող ես ուրանալ մի էակի, որ քեզանից է ծնուած, հին մարդուց նոր մարդ դուրս եկած։ Դու մինչև այժմ մէկ էիր, այժմ եղար երկու։ Հիացումով տես քո որդու մէջ մի երկրորդ դու, որպէս թէ քո պատկերդ երևէր քեզ վճիտ ջրում։ Ինձ՝ հոգ չէ, շպրտիր ուր որ ուզում

ես. ես անտրտունջ կը համակերպիմ և կը վերադառնամ վանք, բայց մի լքի այս երախային. երդւում եմ Ինդրայի երկնքի բոլոր Աստուածների անունով, որ սա քո իսկ հարազատ որդին է»։

Անողոք Դուշմանտան պատասխանում է.

«Ստախօս կին, ներողամտութիւնս ի չարն ես գործ դնում. ես քեզ ասում եմ, որ ոչ քեզ եմ ճանաչում ոչ էլ այդ անագին տղին, որի համար ասում ես թէ ինձնից է ծնուած։

—Ո՜հ, անմահ Աստուածներ,—գոչում է Շակունտալան,—մի ժամանակ հայրս ու մայրս թողեցին ինձ Եբեսի վրայ, հայրս՝ Վիսվամիտրան՝ ամենից անուանին բոլոր ճգնաւորների մէջ, մայրս՝ Մենական՝ ամենից գեղեցիկը բոլոր յաւերժահարսերից. իսկ այսօր վանում է ինձ ամուսինս այսքան մարդոց առաջ, որ մեղքիս համար։

—Իսկապէս, ես էլ խորհուրդ եմ տալիս, որ վերակոչես ծնողներիդ յիշատակը. հայրդ մոռացել է առաքինութիւնն ու անձնատուր եղել հեշտանքի. մայրդ՝ դէն է շպրտել քեզ որպէս ձօնների աւելցուք մի թոշնած փունջ։ Եթէ ճիշտ որ դու մի անառակ կնոջ աղջիկ ես, քո լեզուն ու վարմունքն այլևս ինձ չեն զարմացնի։ Դուրս կորիր, անպատիւ արարած, գնա ուր կ'ուզես, միայն թէ անպիտան երեսդ չտեսնեմ այլ ևս»։

Ա՞յսպէս պէտք էր վարուել վարիկասիրտ, համեստ Շակունտալայի հետ։ Խեղճը քիչ մնաց նուազէր ամօթից ու վշտից։ Երբ մի այնպիսի սէր այսպիսի վախճանի է հասնում, արժէ՞ այլևս այդ սիրոյ մասին խօսել։ Բայց մանուկը կայ, որ, ճակատը դէպի մօր

կուրծքը արած, լալիս է, և մայրն ուղում է արդարանալ նրա սիրուն։ Բաւական է ինչքան արհամարհանք ու նախատինք կրեց. միթէ չունի մի այնպիսի ակներև ապացոյց, որով պապանձեցնէր այդ ապերախտ ուխտադրուժին։ Այն մատանին, որ Դուշմանտան իր իսկ ձեռով դրաւ նրա մատը, կարող է անպայման վերյիշել տալ Շակունտալային։ Շակունտալան նայում է մատը, հէնց այս դերադոյն միջոցը գործ դնելու համար։ Բայց հրպիսի զարմանք. մատանին չկայ. էլ ինչպէս պաշտպանուի այսուհետև։

Դուշմանտայի մէջ սէրը տեղի է տուել անկարեկցութեան, իսկ իշխանաւորն էլ համբերութիւնից է դուրս գալիս. այս տարօրինակ վիճաբանութիւնն երկար տևեց. իսկոյն հրամայում է պահակներին և վերջիններս քարշ տալով դուրս են տանում Շակունտալային, որ, դահլիճի շեմքին, ետ է դառնում և, արդար ցասումով լցուած, յանդիմանում իր մոլորեցուցչին հետևեալ խօսքերով։

«Անպատիւ մարդ. դու պիտի պատժուիս, դու որ հաղիդ ունիս առաքինութեան վերարկուն, իսկ ինքդ նման ես խոտի տակ ծածկուած ջրհորի։ Մի հայր որ ուրանում է իր պատկերը կրող որդուն, Աստուածներն այդպիսի հօր երջանկութիւնը պիտի խորտակեն. ինչքան էլ չուզես, այս տղան է կառավարելու ապագային քո ընդարձակ պետութիւնը, որի սահմաններն հասնում են մինչև Հիմալայա։ Մնաս բարով. վայ ինձ դժբախտիս, որ խաբուեցայ Պուրուի շառաւղիցդ, որ անարժան ես քո ցեղի ներկայացուցիչը լինելու, դու որ շրթներումդ մեղր ունիս, իսկ սրտումդ՝ թոյն»։

Զմոռանանք սակայն ասելու, որ Դուշմանտան այնքան էլ մեղաւոր չէ, ինչքան երևում է։ Վեց տարի առաջ Շակունտալան, ամբողջովին տարուած իր կրքին, անփոյթ էր գտնուած պատշաճաւոր մեծարանք ցոյց տալու Դուրվասա անուն մի ծեր ցասկոտ ճգնաւորի։ Դուրվասան, իր վրէժը լուծելու համար, յայտարարել էր, որ Շակունտալան թագաւորի յիշողութիւնից պիտի վտարուի, որպէս թէ թագաւորն երբեք նրա մասին տեղեկութիւն իսկ ունեցած չլինէր *)։ Ահա թէ որտեղից է սկիզբն առնում այս երկարատև մոռացումը, միանգամայն անհաւատալի այնքան խոստումներից յետոյ, ինչպէս և այս յամառութիւնն ուրանալու այն բոլոր յիշատակները, որ լքուած կինը զուր էր աշխատում զարթեցնել նրա մէջ։ Դուշմանտան բարեմիտ մարդ էր և այս քստմնեցուցիչ խստութեան պատճառը յիշողութեան բացակայութիւնն էր։ Բաւական էր սակայն, որ տեսնէր այն մատանին, որ տարիներ առաջ ինքն էր ընծայել իր սիրելուհուն, և ճգնաւորի անէծքը պիտի դադարէր։ Դժբախտաբար մատանին հէնց այն առաւօտ Շակունտալայի մատից սահել էր ցած, երբ նա իր լուացումներն էր կատարում մի նուիրական լճում, Հաստինապուրայի դռների առաջ։

Դեռ մի ժամ չէր անցած այս սրտայոյզ տեսարանից, որ ամբողջ պալատում խօսակցութեան միակ առարկան էր, և ահա մի ձկնորս պալատ բերաւ թագաւորի մատանին, որ գտել էր ձկան փորում։ Մա-

*) Ճգնաւորներն, իրանց խստակրօնութեան շնորհիւ, օժտուած էին գերբնական կարողութեամբ։

տանին տեսնելն ու յիշողութեան վերադառնալը մէկ եղաւ։ Ո՞վ կարող է պատմել այժմ թագաւորի վիշտն ու խղճահարութիւնը։ Ի՞նչ, Շակունտալայ՞ն, իր այնքան կաթողին սիրած կնոջ, որ Կամայի չափ գեղեցիկ մի որդի էր տուել իրան, վանէր ինքն այդ աստիճան խստութեամբ։ Պէտք էր վազել ետևից, գտնել ուր որ էր. ով վերադարձնէր նրան պալատ, կ'ստանար մի մեծ պարգև։

Աւաղ, թագաւորի սուրհանդակներն ամբողջ երկիրը տակն ու վրայ են անում, բայց չեն գտնում ոչ մօրը ոչ որդուն. չեն իմանում ուր մնացին, ինչ եղան. և վերադառնում են պալատ գլխիկոր, տխուր և յուսահատ։

Գ.

ԵՐԲ թագաւորն անմխիթար էր, ով կարող էր ուրախութեան մասին մտածել։ Գարնան ոմանը, որ կատարելու էին մեծ շքով, արգելուած էր։ Պալատը, որ մի ժամանակ հաճոյքի բնակավայր էր, դառել էր օթևան անասելի տխրութեան։ Թագուհիները տրտնջում էին, որ ամուսինն ուշադրութիւն չի դարձնում իրանց վրայ։ Դուշմանտան եթէ երբեք պատահմամբ մի երկու սիրալիր խօսք էր ասում նրանց, ամէն անգամ բերնից փախցնում էր Շակունտալա անունը. պարզ երևում էր, որ նրա սիրտը տխուր էր և ուրիշ տեղ։ Պալատականներն իրար մէջ բարձրաձայն խօսել չէին համարձակում. նրանց կարծիքով արքայի վիշտը սուգի էր մատնել ընութիւնն անգամ. ծաղիկներն էլ չէին փթթում, թռչուններն էլ չէին երգում և Սէրը, տխրութիւնից, բոլոր սլաքները դրել էր պատկանդարանի մէջ։ Ի հարկէ, այսքան էլ մարդահաճութիւն չէր լինի։ Այսպէս թէ այնպէս երևում էր, որ թագաւորը ոչ մի բանով չէր հետաքրքրւում։ Գործերը նախարարների վրայ թողած՝ գնում թափառում էր շաբունակ իր ծաղկանոցներում, ծաղրածու Մադհավայի հետ միա-

սին, որ իր տիրոջ ինչպէս սիրոյ գաղտնեկիցն էր, այնպէս և վշտերի։ Աչերն անթարթափ և անքնութիւնից քողարկուած, ինքը մի միակ մտածմունքի մէջ խորասուզուած, թագաւորն, արևի ամենասաստիկ տապին, ման էր գալիս, մրթմրթալով անկապ անկապ խօսքեր։

«Ո՜հ, Մադհավա. այսպէս էլ կուրանալ։ Քիչ առաջ քնած էր այս վիրաւոր սիրտս և աչագեղ սիրելուհիս երբ եկաւ, չղարթեց. իսկ այժմ արթուն է և տանջւում։ Դեռ աչքիս առաջ է Շակունտալայիս վերջին արտասուալից նայուածքը, որ շարունակ հալածում է ինձ և այրում թունաւոր սլաքի նման»։

Ծաղրածուին թւում էր, թէ իր տէրը խելքը կորցընում է, ուստի և աշխատում էր զանազան ձևերով նրան զբաղեցնել. սակայն միշտ էլ ետ էր մղւում թագաւորի կողմից։ Վերջինս շարունակ մեղադրում էր իրան և ինքն իր գլխին վայ կարդում։ Վերջապէս, յոգնութիւնից ուժասպառ, յանձն է առնում նստել մի կճեայ նստարանի վրայ, մի ստուերոտ հովանոցում։ Այդտեղ բերել է տալիս ներկերն ու վրձիններն և սկսում վերարտադրել իր սրտում քանդակուած պատկերը։ Սրանով է միայն կարողանում զբաղեցնել իր միտքը. Նէրը ամէն հրապոյր փոխ է տալիս արքայական վրձինին։ Հիմալայայի ձիւնասքող գագաթները, Մալինիի ծաղկազարդ ափերը, յասմիկի թփերը, երկու հաւատարիմ ընկերուհիները, մինչև անգամ սև մեղուն, որ ահաբեկել էր Շակունտալային, այս բոլորը վերարտադրւում են մանրակրկիտ ճշտութեամբ, այնպէս որ թագաւորն, իր ցնորքի մէջ, պատրանքն իրականութեան տեղ է ընդունում և բացագանչում. «Ա՜յ մեղու, չլինի

թէ սիրելուհուս շրթներին դպչիս, վիմբայի*) նման կարմիր շրթներին, նորածիլ կակոնի նման հրապուրիչ շրթներին, որոնց քաղցրութիւնը լիովին ճաշակեցի իմ սիրոյ տօնին, թէ չէ՝ քեզ կը բանտարկեմ լոտուսի բաժակում»։

Այս վիճակն երկար տևել չէր կարող։ Քիչ ժամանակ յետոյ Թագաւորն ուշքի եկաւ, ինչ որ աւելի էր պատշաճում նրա պատերազմասէր բնաւորութեան։ Այդ միջոցներին Աստուածները դիմեցին Թագաւորի օգնութեանը՝ մի խումբ հսկաների դէմ, որոնք եկած էին տիրելու Ինդրայի դրախտին։ Մատալին, Ինդրայի կառավարը, եկաւ տանելու Դուշմանտային։ Սրան էր վերապահուած յանդուգն Դանավասների դէմ պատերազմ մղելու և նրանց նուաճելու պատիւը։ Նա պէտք է անյապաղ վերցներ զէնքերն ու նոյն րոպէին նստէր երկնային կառքը։ Ինդրայի հրամանների դէմ առարկել ներելի չէր, և հերոսն անտրտունջ հնազանդում է։

Ինքնին հասկանալի է, որ Դանավասներն խսկոյն հալածուեցան, ինչպէս հալածւում էին երկրի վրայ Թագաւորի թշնամիները։ Ինդրան էլ գովեստ չմնաց, որ չտար իր պաշտպանին, որին բազմեցրեց կողքին իր իսկ գահի վրայ, կարծես, Աստուածների նախանձը գրգռելու համար։ Բայց Թագաւորն այլ ևս գործ չունէր երկնքում, ուստի և իր մեծաշուք ասպնջականներից Թոյլաւութիւն խնդրեց վերադառնալու իր մայրաքաղաքը։ Դարձեալ Մատալի առաջնորդութեամբ ճանապարհ ընկաւ դէպի երկիր։

*) Մի տեսակ կարմիր պտուղ։

Արդէն կառքը, ամէն կողմից թեթև գոլորշիներով շրջապատուած, դէպի ցած էր սահում ամպերի միջով. ճանապարհորդներն հեռուից տեսնում էին հրաշագեղ Հաստինապուրան, որ անջրպետի մէջ երևում էր որպէս մի կէտ, և Մալինի գետակը, որ պարզւում էր մի նեղ ժապաւէնի նման արգաւանդ հովիտների միջին։ Յաղթականի շահատակութիւնները մի երջանիկ ամոքումն էին սիրահարի կրած ցաւերին և Դուշմանտան աւելի էր հետաքրքրւում տեսնելու ամէն ինչ որ աչքին հանդիպում էր։ Երբ օդեղէն կառքը մօտեցաւ մի բարձր լեռան գագաթին, Մաասալին իր ուղեկցին բացագրեց, որ այդ տեղը կատարելութեան դաշտն էր, ուր, աշխարհի վրայ սուրբ կեանք վարած ճգնաւորները, իրանց մահից յետոյ, վայելում էին գերագոյն երանութիւնը։ Այնտեղ մարմինը կամ հոգին տառապեցնող ոչինչ չկար, ոչ սառնաշունչ քամի ոչ կիզիչ արև, այլ տիրում էր միօրինակ բարեխառնութիւն, քաղցր օդ. առանց մշակման, աճում էին ամենահազուագիւտ տունկերը, փթթում ամենաչքնաղ ծաղիկները. հողը ծածկուած էր կարկհաններով, մարգարիտներով ու ադամանդներով։ Ո՛վ ուզում է հարստանալ, թող դնայ այնտեղ. մի քանի բոպէում ահագին գանձ կը դիզէ. բայց ճգնաւորները մտածում էին միայն երկնային երանութեան մասին։ Երբեք ոչ ագահութիւն, ոչ ատելութիւն, ոչ նախանձ, ոչ բարկութիւն, ոչ որկրամոլութիւն և ոչ ուրիշ որ և է մարդկային եպերելի կիրք դեռ չէին անպատուած այս աստուածային սրբավայրը։ Այս նուիրական լեռան բնակիչներն իրար սիրում էին եղբայրաբար. Աստուածներին էին օրհնաբա-

նում ամբողջ օրը և միշտ զգաստ էին, թէև ամենաչքնաղ յաւերժահարսերով շրջապատուած։

Թագաւորը, լսելով Մատալիի այսօրինակ նկարագրութիւնը, փափագ յայտնեց կանգ առնելու պահ մի և ողջունելու այնտեղ ապրող սրբերին։ Կառավարը չէր կարող մերժել մի մարդու. որ Ինդրային փրկելուց էր վերադառնում, ուստի և կառքը կանգնեցրեց լեռան գագաթին, որ այդ պահուն ամայի էր։ Տեսնում են միայն մի երեխայ, որ խաղում էր մի կորիւնի հետ։ Տարօրինակ ժամանց. ուզում է անպատճառ ձեռը խրել գազանի երախը և տեսնել թէ քանի՞ատամ ունի։ Զարաճճին որքան անխոհեմ այնքան էլ քաջասիրտ է, այնպէս որ հերոսին դուր է գալիս։ Դուշմանտան գնում է մօտը։ Ո՞վ զարմանք, ո՞վ ուրախութիւն. սխալուել անկարելի է. խրոխտ դէմքը, կապոյտ փայլակնացայտ աչերը, ափի մէջի գծերի երկարութիւնը. յատուկ մի միայն Պուրուհան ցեղին, այս ամէնը ցոյց են տալիս, որ դա իր իսկ որդին է, որի համար այնքան վշտակրում էր։ Այս անգամ այլ ևս անէծք չկար, որ կուրացնէր թագաւորին։ Մանկան առնում է գիրկը, համբուրում է գլուխն ու սեղմում կրծքին. մանուկն էլ իր կողմից է գգւում նրան։ Սիրելուհին զուր չէր ասում. ի՞նչ հայ աւելի քաղցր քան որդու համբոյրը։

Շակունտալան, որդու համար անհանգիստ, վազում է մօտը և վրայ հասնում հայրական այս գուրգուրանքին։ Կանգ է առնում ապշած, չհաւատալով աչքին։ Վրէժխնդրութիւնը վերաւորուած կնոջ սրտի համար քաղցր է և լաւ առիթ էր փոխարէնը հատու-

ցանելու։ Թագաւորը նոյնպէս, Շակունտալային տեսնելով, կարծես յանկարծակիի է գալիս և նահանջում է ետ. նայում է նրան, այս անպարտելի ռազմիկը, աղերսող, պաղատական, երկչոտ նայուածքով։ Վայ թէ յանկարծ կինը չներէ նրան այնքան ծանր վիրաւորանքից յետոյ։ Վայ թէ հիմա էլ նա վնասէ այն մարդուն, որ նրան ուրացել էր ամբողջ պալատականների աչքի առաջ։ Բայց ո՛չ. ճշմարիտ սէրը բարձր է և հպարտութիւնից և դիւրազգածութիւնից. մաղերն այրի կանանց նման ի մի հիւսած՝ այս աննման կինը ճնացել էր անմխիթար. հակառակ տեղի ունեցած բոլոր անցքերին՝ նա պահել էր իր հաւատարմութիւնը, վիշտն ու յիշողութիւնները։ Տղան կայ, կապը այս երկու խոցուած սրտերի միջև։ Շակունտալան վերյիշում է միայն երջանիկ օրերը և անտրտունջ բաց է անում թեերը զղջահար ամուսնին։

Առաջին խանդավառութեան յաջորդում են երկուստեք բացագրութիւններ։ Ի զուր չէ, որ Շակունտալայի մայրը անմահներից է։ Աստուածային յարկերի բարձրութիւնից Մենակայի սիրազեղ հովանին հսկում էր նրա վրայ։ Տեսնելով իր դստեր այդօրինակ զրկանքները՝ յաւերժահարսն իջել էր երկիր և թէ մօրը թէ մանկան հանել եթերի մէջ։ Այս օրից երիտասարդ կինն ապրում էր սրբերի օթեանում։

Հերթը գալիս է թագաւորի արդարացմանը։ Նրա ցոյց տուած այն ասիճան քարասրտութեան պատճառն, անտարակոյս, մի անէծք էր, որ ծանրանում էր նրա վրայ։ Սակայն երբ մատանին, որ զուր էր փնտռում Շակունտալան, դիպուածով գտնուեց ու

երևաց Դուշմանտայի աչքին, թագաւորի կուրութիւնն իսկոյն փարատեցաւ, յիշողութիւնը վերադարձաւ ու ընկաւ յուսահատութեան մէջ։ Դրանից յետոյ սուրհանդակները ուղարկուեցան պետութեան ամէն կողմերը որոնելու Շակունտալային, բայց չգտան։ Շակունտալան վայելում էր երկնային պուրակների հովանին։ Իսկ այն օրից թագաւորն աչք չէր բաց անում տառապանքից ու վշտից։ Վերջը, երբ Ինդրայի հրաւէրով Դանավանների դէմ մղած պատերազմից վերադառնում էր երկիր, մի անբացատրելի նախազգացում կանգ առնել տուաւ նրան այս վայրերում։ Տարակոյս չկայ, որ Աստուածների բարեացակամութիւնն էր պատրաստել այս հանդիպումն երկու անմխիթար ամուսինների միացման համար։

Շակունտալան Դուշմանտայի անկեղծութեան վրայ չէր կասկածում. նա հիմայ էր յիշում, որ իր երկու ընկերուհիներն այդ անէծքից տեղեակ էին, և, դրա համար էլ, յանձնարարել էին չմոռանալ մատանին ցոյց տալ թագաւորին, եթէ վերջինս չճանաչէր նրան։ Սակայն մեր ազնիւ հերոսուհին արժանի էր բուն իսկ Աստուածների բերնից լսելու իր ամուսնու վերահաստատումը։

Յանկարծ օդի միջից մի գերմարդկային ձայն այս խօսքերն է արձակում սիրատարփ և յափշտակուած զոյգին։

«Լսիր, Շակունտալա, ճշմարտութիւնը, որ հաստատւում է երկնաբնակների կողմից. մեծանձն արքայի կամքը ընաւ մաս չունէր այն երկարատև մոռացման և արհամարհոտ մերժման մէջ։ Քո ամուսինն ենթար-

կուած էր մի վերընական աղղեցութեան, որի վախճանը բարեբախտաբար լաւ եղաւ։ Իսկ դու, Դուշմանտա, տէր եղիր քո որդուն և պատուիր նրա մօրը. այս մանուկը պատուղն է քո միութեան Շակունտալայի հետ։ Տար նրան պալատ և խնամով դաստիարակիր, որպէսզի ապագայում քեզ յաջորդէ։ Նա պիտի նուաճէ երկրի բոլոր թագաւորներին և ես աւելի պիտի պանծացնէ քո ցեղի փառքը»։

Այս բոլոր գուշակութիւնները պիտի կատարուէին։ Վերադարձին թագաւորն իր որդու գահաժառանգութեան նուիրագործման հանդէսին, ուր տրուեցաւ նրան Բհարատա անունը, ի պատիւ Աստուածների ձօնեց բազմաթիւ զոհեր և բրահմաններին բաշխեց առատ պարգևներ։ Այս Բհարատայից է, որ սկիզբն առաւ Բհարատիդների մեծ ցեղը*։

Դրանից յետոյ դեռ երկար տարիներ ապրեց Դուշմանտան իր կնոջ հետ, որի գիւտն ուղղակի հրաշք էր։ Այնքան փորձանքներից յետոյ նրանց վերապահուած էր անխառն երջանկութիւն։

*) Այդ ցեղի ներկայացուցիչների սխրագործութիւններն ու փառքն է երգում հնդկաց Մահաբհարատա աշխարհածանօթ դիւցազներգութիւնը, որից վերցուած է եւ սոյն պատմուածքը։

ՎՐԻՊԱԿՆԵՐ

էջ	տող	սխալ	ուղիղ
33	15—16	Շակունկունտալան	Շակունտալան։
34	9	և	որ
39	5	սպասում էր	սպասում էր

ՅԱՆԿ ԵՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք . . . . . էջ՝ 5.

Նախերգանք—Ինդրայի երկիւղը, Մենակայի յաղթանակն ու Շակունտալայի ծնունդը » 9.

Գլ. Ա.—Թագաւորի որսը նուիրական անտառում և առաջին տեսակցութիւնը Շակունտալայի հետ . . . . » 19.

Գլ. Բ.—Սիրոյ ցաւն ու նրա դեղը . . » 30.

Գլ. Գ.—Շակունտալայի հրաժեշտը վանքին և երթը թագաւորի մօտ. ուրացում. . » 42.

Գլ. Դ.—Թագաւորի զղջումն ու խղճահարումը. յաղթանակ դևերի դէմ և երջանիկ հանդիպում Շակունտալայի հետ . . » 51.

ՎԵՐՋ



ԹԱՐԳՄԱՆՉԻ ԳՈՐԾԵՐԻՑ

1. ՕՏԱՐ ՓՈՒՆՉԵՐ, Ա. հիւսք—Շիլլէրի բալլադներից—թարգմ. Գերմ. . . . 20 կ.
2. ՕՏԱՐ ՓՈՒՆՉԵՐ, Բ. հիւսք—Հաֆրզից—թարգմ. Պարսկ. . . . . 25 կ.
3. ԵՐԵՔ ԳՕՏԻ, Ժուկովսկուց, թարգմ. Ռուս. 10 կ.
4. ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ, Անդերսէնից—թարգմ. Գերմ. (սպառած) . . . . 5 կ.
5. ՈՍԿԷ ԽԱՐԱԶԱՆ, Ա. Բանգաբէից, թարգմ. Յուն. (սպառած) . . . . 20 կ.
6. ԺՈՒԺԿԱԼ ԳԻՆԵՏՆԵՐԸ. Գր. Պեսրովից, թարգմ. Ռուս. . . . . 10 կ.
7. Le parler Arménien d'Akn, (Ակնայ բարբառի ուսումնասիրութիւնը). . . . 4 ր.

ՍԱՀՄԱՆ ... ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ... ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Հրատարակութեան համար պատրաստ են.

1. ԾԱՂԿԱԳՐԵՐ ՈՒ ԶԱՐԴԵՐ—(Գիտական-Գեղարուեստական ժողովածու). մանրանկարչական հարատաւ վերարտադրութիւն հայկական հնագոյն ձեռագրերից, ընդարձակ ուսումնասիրութեամբ հայկական կենդանագրերի ծագման ու զարգացման մասին։

2. ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ ԵՒ ՀԱՄԱՌՕՏ ՅՈՒՅՑԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.

3. ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԵՐԹԵՐԻ ՎՇՏԵՐԸ—Վ. Գեօրգի. Թարգմ. Գերմաներէնից։

4. ԾԱՂԿԱՓՈՒՆՁ Հաֆրզից եւ Սադիից.

5. ՇԱԿՈՒՆՏԱԼԱ (դրամա)—Կալիդասայի.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0080285

[2n.]

Կգրաչ
320